Պատմվածք, Հայ գրականություն, Արձակ

13+

ՄԿՐՏԻՉ ԱՐՄԵՆ

Կույր վարպետի լեգենդը

1

Հազար ինը հարյուր քսան թիվ: Ձմեռ: Հեղափոխություն: Ալեքսանդրոպոլ: Իր փոքրիկ սենյակում՝ կույր վարպետը….

Յոթանասուն տարեկան է նա և վաթսուն տարվա կուրացած: Ծաղիկը՝ գեղեցիկ անունով այդ զարհուրելի հիվանդությունը, տարել է նրա տեսողությունը: Հավիտյան մարել են նրա աչքերի առջև գույն ու ձև, տեսք ու կերպարանք… Մի սև անդունդ, անտակ և անհուն, հար կանգնած է նրա աչքերում:

Իր կուրության առաջին տասնամյակներում, այդ խավարը ճեղքելով, երբեմն փայլատակում-անցնում էր որևէ պատկեր. մի գույն, մանկական հուշերից մնացած մի ձև.. . Իսկ հետագայում այդ հանկարծակի պոռթկումներն էլ վերջացան, և խավարը դարձավ խաղաղ, համատարած.. .

Նրա ծնողները նրան ուսանելու էին տվել, և նա սովորել էր երաժշտական արվեստի նուրբ գաղտնիքները: Երկար տարիներ նա անցկացրել էր իր ծննդավայրից դուրս: Եվ երբ վերադարձել էր ետ, նրա մտածկոտ ու տխուր ճակատի վրա ընկած էր եղել զվարթության մի նեղ ակոս: Չէ՞ որ նա իր հետ բերել էր մխիթարության արվեստը, կույրերի արվեստը:

Նա վերադարձել էր հայրենիք իբրև տաղանդավոր ու մեծ երաժիշտ...

2

Քսան թիվ: Ձմեռ: Ալեքսանդրոպոլ: Ցուրտ է անասելի, և վառելիք չկա: Կույր վարպետը փչում է իր սառած մատներին և մոտենում է դաշնամուրին: Նա այսօր տխուր է, ինչպես վաթսուն տարի շարունակ: Նրա անօգնական մատները դողդողում են և կարծես լաց լինում: Նրա անշարժ դեմքի վրա քարացել է անբուժելի վիշտը. ..

Ցուրտ է... Ձյուն... Քամի.. . Քամին վազում է դրսում, և նրա ուժից զրնգում են կույր վարպետի լուսամուտները: Նստում է վարպետը դաշնամուրի մոտ և նորից դնում է իր հոգին իր մատների մեջ: Նա նվագում է իր երգերը: Ոչ, նա չի նվագում իր երգերը, այլ ամեն նվագելիս նորից և նորից ստեղծում է իր երգերը, կերտում է և քանդակում: Նրա յուրաքանչյուր հնչյունի մեջ հեծեծում է լույսի կարոտը, հեկեկում է կորած կյանքի կարոտը: Նվագում է կույր վարպետն այնքան հստակ, որ տեսնում է իր յուրաքանչյուր հնչյունը, վշտի իր յուրաքանչյուր շեշտը.. .

Սակայն մի՞թե միայն կույր վարպետն է լալիս իր երգերում: Այնտեղ տնքում է նրա ժողովուրդը, տնքում են նրա անթիվ զավակները: Եվ նրա աչքերի առջև կարծես փռվում է արևի երկիրը՝ Պարսկաստանը, կույր վարպետի նման զրկված արևից: Այնտեղ հուսահատ մրմնջում են Իրանի ֆահլաները՝ փնտրելով մի լույս, մի ճանապարհ:

Լալիս է պարսիկը՝ բահը ձեռին, Շիրազի վարդաստանները սարքելիս: Այնտեղ, վարդե երազի մեջ, օրորվում են սոխակներն ու սարդարները: Լալիս է պարսիկը՝ բահը ձեռին, Շիրազի վարդանոցները քանդելիս: Այնտեղ, գորշաքար շենքերի մեջ արբենում են խաներն ու անգլիացիները: Լալիս է պարսկուհին՝ ֆինջանը ձեռքին, խաներին սուրճ մատուցելիս: Լալիս է պարսկուհին՝ ֆինջանը վաճառելիս, լալիս է արևելքը թաղող հնավաճառի առջև...

Ցուրտ է... Ձմեռ.. . Հեղափոխություն: Քսան թիվ...

Փակված իր կիսանկուղային սենյակում, ահա յոթ օր է, ինչ վարպետն անընդհատ նվագում է: Երբեմն միայն նա փչում է իր սառած մատներին և շարունակում է նվագը: Ցուրտ է, վարպետը միայն այդքանը գիտե դրսի անցուդարձից և ուրիշ ոչինչ:

Լալիս է նրա նվագը...

3

Յոթերորդ օրը քամին սաստկացավ: Կույր վարպետն իր ոսկորների մեջ զգաց դրսում շարունակ տեղացող ձյան սառնությունը: Նա մենակ էր իր դաշնամուրի հետ և միասին էր՝ նրա հետ: Նա լացացնում էր այդ հարազատ գործիքը, որին վիճակված էր նրա վաթսունամյա վշտի ընկերը լինելու տխուր պարտականությունը: Ոչ մի ուրախ ինչյուն չէր թրթռացել նրա ստեղներից՝ վարպետի վաթսուն կույր տարիների ընթացքում...

Եվ այժմ էլ, ինչպես միշտ, նա խոսում էր վարպետի փոխարեն, երգում դառնաթախիծ, և կիսանկուղային փոքրիկ սենյակը հագենում էր կույր վարպետի հոգու ինչյուններով:

Հանկարծ վարպետը ցնցվեց: Վաթսունմեկերորդ կույր տարվա շեմքին նրա նվագարանն արձակեց անծանոթ ինչյուն: Մի՞թե իր նման ծերացել էին նաև նրա ստեղները...

Վարպետը լարեց իր առանց այն էլ սուր լսողությունը և շարունակեց նվագել: Անծանոթ ինչյունների մի ամբողջ հեղեղ հորդեց դեպի նրա եղանակը: Սակայն այժմ վարպետն զգաց, որ դա նվագարանը չէր, այլ դավաճանում էին իր ցրտահար մատները...

Նա տենդորեն իրար շփեց ձեռքերը, փչեց դրանց վրա, նորից շարունակեց նվագել: Ոչ, մատները հավատարիմ էին նրան՝ նրա նվագարանի պես: Սակայն անտես մի վայրից, անանուն մի վարպետ համարձակվում էր խանգարել նրա նվագը:

Կույր վարպետը, որ իր ամբողջ կյանքն ապրել էր կիսանկուղային այդ սենյակում և գիտեր դրա ամեն մի խորշը, ամեն մի առարկան, թողեց դաշնամուրը և սկսեց արագ պտտվել այնտեղ, կարծես գտնելու համար անծանոթ ինչյունների հեղինակին:

Կույր վարպետի տարածած ձեռքը կպավ լուսամուտի ապակուն և զնգացրեց: Աշխարհից եկող այդ ձայնից սթափված, նա քարացավ իր տեղում: Եվ իսկույն, մոռանալով ցուրտն ու արհամարհելով քամին, նա լայն բաց արեց կիսանկուղային իր փոքրիկ սենյակի լուսամուտներից մեկը…

Անծանոթ ինչյունները, այժմ ազատորեն ուժգնացած, հորդեցին ներս: Այդ՝ նվագում էր հաղթանակած Հայաստանը:

Ցուրտ... Քամի... Ձմեռ... Ձյունն իջնում է խոշոր հատիկներով և նստում է կույր վարպետի նույնքան սպիտակ մազերի և մորուքի վրա: Քամին բորբոքում է նրա գլխի մազերի սպիտակ ու սառ բոցը, որը ոչ հանգչում է ձյունից և ոչ լեցնում է այն: Կույր վարպետը դուրս է նայում և վաթսուն երկար տարիներ հետո նորից նրա մեջ արթնանում է հին և անիրականալի ցնորքը՝ տեսնել, տեսնել, տեսնել... Եթե միայն կարելի լիներ տեսնել...

Հեռու կայարանում երգում է ժողովուրդը, երգում են դրոշակներն ու զենքերը: Զրահագնացքն է նվագում այնտեղ և նրա ինչյունների մեջ այլևս լաց չի լինում աշխատավոր աշխարհը, այլ պայքարում է: Նրա զվարթ ինչյունները ներս են խուժում կույր վարպետի տխրաթախիծ մենաստանը...

4

Երբ ցրտահար երեք բոլշևիկներ ներս մտան կիսանկուղը և փայտ բերեցին վարպետի համար, վարպետն ուրախ արցունքներով ողջունեց նրանց և դողդողացող մատներով շոշափեց նրանցից յուրաքանչյուրի դիմագծերը՝ իր հիշողության մեջ ընդմիշտ պահելու համար: Իսկ երբ նրանք արդեն դուրս էին գնում, վարպետը հիշեց, որ իր կիսանկուղի կողքին և կիսանկուղի վրա նա ունի

սենյակներ, որոնք պետք չեն իրեն, բայց կարող են պետք գալ նրանց: Նա առաջարկեց: Հետևյալ օրն իսկ այնտեղ փոխադրվեց ինչ-որ հիմնարկ: Հիմնարկի անարվեստ հնչյունները եկան լցվելու վարպետի տունը. գրամեքենաների չխկչխկոցներ, սանդուղքներով վեր ու վար գնացող ոտնաձայներ, խոսակցություններ...

Եվ այժմ, իր դաշնամուրի մոտ նստած, վարպետը լսում էր դրանք՝ լուռ և շունչը պահած: Նրան կլանել էին այդ անարվեստ հնչյունները, որոնցից, նա գիտեր, պիտի ծնվեր նոր մարդկանց արվեստը: Նա դեռ չէր մոռացել անհասկանալի այն պահը, երբ իր եղանակի թախիծը ճեղքելով, ներս էին հորդել ահա այսպիսի հնչյուններ, հաղթող, հաղթանակ բերող մարդկանց ձայները...

Հանկարծ կույր վարպետի դեմքի վրայով հոսեցին անօգնական դառն արցունքները: Արցունքները՝ այն բյուրավոր մարդկանց համար, որոնք մեռան՝ առանց տեսնելու հաղթանակի օրը: Արցունքները՝ պարսիկի ու պարսկուհու համար, ֆահլայի ու ռանչպարի համար, Շիրազի ու ֆինջանի համար: Եվ նա մատները դրեց նվագարանի ստեղներին՝ հնչեցնելու համար իր ամենալավ երգը՝ ի հիշատակ իր հարազատ երկրի անթիվ զավակների: Եվ այդ երգը հնչեց այնպես դառն ու տխուր, ինչպես երբեք: Կույր վարպետը տարվեց իր եղանակի թևերի վրա և չզգաց, թե ինչպես մի զարմացած զույգ կանգ առավ նրա լուսամուտների տակ և սկսեց լսել: Չզգաց նաև, թե ինչպես այդ զույգը կամացուկ մտավ նրա սենյակը և կանգ առավ նրա դռան մոտ:

Կույր վարպետը չզգաց, թե ինչպես այնտեղ, վերևում, լռեցին բոլոր ձայները, և հիմնարկությունը լուռ ականջ դրեց նրա արվեստին: Երաժշտությունը հիպնոսեց նրանց, և նրանք իրենց գլուխները խոնարհեցին աշխատավոր արևելքի զոհերի և նրանց կույր վարպետի առջև: Իր գրասեղանի ետևում, գլուխն ատրճանակի պատյանին հենած, լռեց հիմնարկի պետը: Լացեց մյուսն իր աթոռի վրա՝ վիրակապ քունքը ձեռքին հենած: Լացեցին աղջիկներն իրենց գրամեքենաների մոտ և լացեցին այցելուները: Սրտաբուխ մի անձրև դուրս հորդեց վերջապես, որ դեմ էր առել նրանց կոկորդում: Պայքարի ընթացքում ժամանակ չէր եղել, իսկ հետո՝ առիթ: Ու միայն այժմ կույր վարպետը բաց էր անում նրանց հոգու ակունքներն իր կույր հանճարի վաթսուն տարիներով:

Լացեց ողջ տունը, իսկ քիչ հեռու, երբ նվագի վերջին թրթիռները հանգան կիսանկուղային սենյակում, վերևում նորից չխկչխկացին գրամեքենաները և նորից շարունակվեց սովորական կյանքը...

Ուրիշ մարդկանց ներկայությունն իր սենյակում կույր վարպետն զգաց նյարդերով և հանդարտ հարցրեց.

— Ի՞նչ եք ուզում, զավակներ...

— Վարպետ,— բացականչեց տղան և բռնեց նրա ձեռքը,— դարձրու ինձ քո աշակերտը: Տուր ինձ քո արվեստը, սովորեցրու շարժել մարդկանց սիրտը, ինչպես դու:

— Վարպետ,— խնդրեց աղջիկը և համբուրեց նրա ձեռքը,— տուր ինձ քո երգերի լեզուն: Ես ուզում եմ երգել ամբողջ աշխարհին իմ տանջված եղբայրների և քույրերի վիշտը և քո տաք սերը նրանց հանդեպ:

— Եղեք իմ աշակերտները,— մրմնջաց վարպետը:

5

Տղամարդը սիրում էր աղջկան երեսնամյա տղամարդու իր հասուն սիրով, և աղջիկը սիրում էր նրան կրտսեր ընկերուհու պես: Երբ տղամարդն աղջկան սեղմում էր իր գրկի մեջ, և աղջիկը նայում էր նրա երեսին, նա նմանվում էր մի մարդու, որն իր առնական ձեռքերում բռնել էր իր երջանկությունը: Ինչպիսի՜ վեհություն կար այն բորբոք սիրո մեջ, որ տածում էր այդ հաղթանդամ տղամարդը դեպի իր փոքրիկ ընկերուհին...

Նա սիրում էր աղջկան այնպես, ինչպես կարելի էր սիրել կյանքը՝ անվերապահ ու անվերադարձ: Եվ աղջիկն իր հերթին, փոքրամարմին ու փոքրահասակ, սիրում էր նրան իր ողջ էությամբ, երազելով ու երգելով նրա թևերի մեջ: Երբ նայում էր նա վերև՝ իր տղամարդու աչքերին, նա գիտեր, որ իր փոքրիկ ձեռքերի մեջ պահում էր այդ հաղթ տղամարդու բախտն ու

երջանկությունը: Գիտեր նաև, որ նրա հոգին, սիրո հրդեհի դեմ մեղկացած, պատրաստ է հազար ու մի գործերի՝ նրա համար:

Հետո աղջիկը դուրս էր պրծնում նրա թևերից, ծիծաղում և շարունակում ճանապարհը: Իր կողքին, իր գլխից մի քիչ բարձր, նա զգում էր սիրած տղամարդու ջերմ շնչառությունը:

Երբ ցրտից կարմրած, արագ և աշխույժ, նրանք թևանցուկ ներս էին նետվում կույր վարպետի նախասենյակը, նրանց ուրախ ծիծաղն ու կանչերը տարածվում էին ողջ բնակարանով: Հետո նրանք մտնում էին վարպետի սենյակը, աղջիկը՝ շփելով իր կարմրած այտերը, իսկ տղամարդը՝ գետնին թխկթխկացնելով ոտքերը:

Տրտում վարպետը համակվում էր նրանց ուրախությամբ: Այդ՝ հեղափոխությունն էր, որ սիրո կերպարանք առած, մտել էր նրա մենաստանը: Եվ նա սիրում էր նրանց՝ այդ երկու երիտասարդներին իր ամուր սիրով: Դաշնամուրի մոտ նստած, նա անհամբեր սպասում էր նրանց գալուն: Եվ եթե ուշանում էին նրանք, անսփոփ տխրում էր վարպետը նրանց համար: Ի՞նչ կլիներ, եթե ձմռան այդ ցրտին, դժվար այդ օրերին, նրանցից մեկն ու մեկը հիվանդանար կամ մեռներ... Այդ դեպքում կփշրվեր ոչ միայն մյուսի սիրտը, այլև վարպետի կյանքը... Եվ որքա՜ն էր ուրախանում կույր վարպետը, երբ լսում էր միջանցքի դռան ձայնը և արագ ներս մտնող զույգի՝ ցրտից վախեցած ծիծաղն ու կանչերը...

Եվ վարպետը նվագում էր նրանց համար, նա կարծես պատմում էր իր վաթսուն տխուր տարիների եղերգը:

Իսկ նրանք, նստած նրա մոտ, թեթևակի միմյանց գրկած և գլուխներն իրար հպած, անթարթ լսում էին նրան: Նվագի տակ նրանց սրտերն ավելի ջերմ էին կապվում միմյանց հետ, և նրանք պատրաստվում էին այդ սիրո և այդ նվագի հուրը տանել հաղթանակած իրենց եղբայրներին և քույրերին:

Հետո տղան վերցնում էր ջութակն ու նվագում, իսկ աղջիկը երգում էր: Կույր վարպետը, դեմքի վրա հավիտենական անորոշություն, ծնոտը մի քիչ առաջ թեքած, կարծես զարմացած, լուռ, անշարժ, լսում էր նրանց իր հիվանդագին սուր լսողությամբ:

Նա առաջին անգամն էր լսում, որ իր երգերն ուրիշների մատների տակ կամ ուրիշների բերանում հնչեցին այդքան ճիշտ ու հարազատ: Եվ երբ նորից իր դաշնամուրի առաջ նստած, նա իր նվագն էր խառնում տղայի ջութակին և աղջկա երգին, նրա հիվանդագին սուր լսողությունը չէր որսում և ոչ մի կեղծ հնչյուն, և ոչ մի սխալ:

Նրանք տաղանդավոր աշակերտներ էին, իր արժանավոր աշակերտները...

Հազար ինը հարյուր քսան թիվ: Ձմեռ: Հեղափոխություն: Ալեքսանդրոպոլ: Ազատագրված աշխարհը պատրաստվում էր լավ ապագայի, լայն ու երջանիկ կյանքի: Բոլորը պատրաստվում էին համոզված ու վստահ, համառ ու աննահանջ:

Ցուրտ... Քամի... Ձյուն... Իսկ այնտեղ, կույր վարպետի կիսանկուղային փոքրիկ սենյակում, երկու կիսակուշտ և վատ հագնված մարդիկ, երկու սիրող սրտեր, կյանքի երկու հարազատ զավակներ, նույնպես պատրաստվում էին գալիք մեծ օրերի, մեծ օրերի համար...

1933